ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.

Հնագույն ժամանակներից Հայկական լեռնաշխարհի բնապատմական միջավայրում են ընթացել տեղաբնիկ հայկական էթնոհոգևոր[1], մշակութային, հասարակական ու քաղաքական զարգացումները: Նոր քարի (նեոլիթ)[2], պղնձի-քարի (էնեոլիթ)[3] և բրոնզի[4] դարերի հնագիտական, ինչպես նաև մ.թ.ա. III-II հազարամյակներից շումե-

---

[1] *Հայոց վաղնջական էթնիկական պատմությունը վկայված է Հայաստանի հնագույն նյութական և հոգևոր մշակույթով, որի ստեղծողները պատկանում են գիտության մեջ արմենոիդ կոչվող մարդաբանական տիպին* (**Luschan F.** *The Early Inhabitants of Western Asia, Journal of the Royal Anthropological Institute of Great Britain and Ireland, vol. 41, London, 1911, p. 228, 240-244;* **Бунак В. В.** *Crania Armenica. Исследование по антропологии Передней Азии (Труды Антропологического НИИ при I МГУ, вып. II. Приложение к "Русскому антропологическому журналу", т. XVI, вып. 1-2, М., 1927, с. 7);* **Кочар Н. Р.** *Антропология армян. Дерматоглифика и популяционная структура, Е., 1989, с. 25;* **Movsesyan A. A.** *Crania Armenica: a study of genetic variability from Bronze age until present based on non—metric data // 12th Congress of the European anthropological association. Program abstracts, University of Cambridge, 2000, p. 11,* **Мовсесян А. А.** *Фенетический анализ в палеоантропологии, М., 2005, с. 209):*

[2] *Հնագիտության մեջ «Ոսկե եռանկյունի» տերմինով բնութագրվող տարածքը (մ.թ.ա. XI-VII հազարամյակներ) նշված է հյուսիսային Միրիայում, «Անատոլիայի հարավ-արևելքում» և արևմտյան Զագրոսում* [**Kozlowski S. K., Aurenche O.** *Territories, Boundaries and Cultures in the Neolithic Near East, BAR International Series 1362, Oxford, 2005, p. 80-82,* **Asouti E.** *Beyond the Pre-Pottery Neolithic B interaction sphere (Journal of World Prehistory, 2006, p. 97)], այնինչ «Անատոլիայի հարավ-արևելք» արտահայտությունը սխալ կերպով օգտագործված է Հայկական լեռնաշխարհի արևմուտքի և հարավի փոխարեն, որտեղ և հարակից՝ Հյուսիսային Միջագետքի* (**Schmidt K.** *Sie bauten die ersten Tempel, München, 2006*), *իսկ՝ Հայոց Միջագետքի շրջանում վաղագույն քաղաքակրթական որակներ կրող հնագիտական հուշարձաններ են հայտնաբերվել: Այդ են վկայում նաև մ.թ.ա. VII-VI հազ. Հայկական լեռնաշխարհի մյուս մասերի հնագիտական հուշարձանները* (**Бадалян Р., Аветисян П., Ломбард П., Шатенье К.** *Поселение Араташен (неолитический памятник в Араратской равнине), Культура древней Армении, XIII, Материалы республиканской научной сессии, Е., 2005, с. 34-41 և այլն): Նեոլիթում Հայաստանից Միջագետք և Մերձավոր Արևելքի երկրներ վանակատ է արտահանվել* (**Dixon J., Cann J., Renfrew C.** *Obsidian and the Origins of Trade – Scientific America, 1968, N 218, p. 46):*

[3] **Մարտիրոսյան Հ. Ա., Թորոսյան Ռ. Մ.,** *Հայաստանի էնեոլիթյան մշակույթի հարցի շուրջ [Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 1967, N 3, էջ 52-62],* **Թորոսյան Ռ.,** *Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը, Ե., 1975, Areni-1 Chalcolithic Cave Settlement, http://arenicave.livejournal.com/ և այլն:*

[4] **Խանզադյան Է. Վ.,** *Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազ., Ե., 1967,* **Խանզադյան Է., Մկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս.,** *Մեծամոր, Ե., 1973,* **Տիրացյան Գ. Ա.,** *Արմավիրի 1973 թ. պեղումների նյութերից [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1974, N 3, էջ 174],* **Դևեջյան Ս. Հ.,** *Լոռի Բերդ, II (միջին բրոնզ), Ե., 2006 և այլն:*

բական, աքքադական ու խեթական սեպագիր սկզբնաղբյուրների տվյալները վկայում են համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ Հայոց հոգևոր, Հայկազունների գլխավորած պետականության[5] (Արատտա[6], Արմանում[7], Հայասա[8]) և քաղաքակրթական խորը արմատների ու բարձր որակների մասին[9], որոնց արգասիքն էին մ.թ.ա. I հազ. Արարատյան՝ Վանի (Ուրարտու) (մ.թ.ա. IX-VII դդ.) ու Երվանդյանների (մ.թ.ա. VII դ. վերջ-III դ.) թագավորությունները, Արտաշես I-ի (մ.թ.ա. 189-160 թթ.) և հատկապես նրա թոռան՝ արքայից արքա Տիգրան Բ Մեծի (մ.թ.ա. 95-55 թթ.) օրոք՝ Մեծ Հայքի թագավորության գերիզորացմամբ՝ Հայոց տերությունը[10]:

---

[5] *Հայկյանների գործունեության մասին Մովսես Խորենացու (V դ.) (Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 38-39, 63-64) հաղորդումները հաստատվում են պատմագիտության մեջ [***Ալիշան Ղ.,*** *Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վ., 1869, էջ 79-81, 94-96,* **Խանզադյան Է.,** *Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում:* **Мартиросян А.** *Аргиштихинили, Е., 1974,* **Ավետիսյան Պ., Գասպարյան Բ.,** *Ագարակի հուշարձանախմբի 2001 թ. պեղումները (Հին Հայաստանի մշակույթը, XII, Ե., 2002, էջ 9-12),* **Карапетян И., Хачатрян Ж., Канецян А.** *Доурартский Армавир (III - начало I тыс. до н. э.) (ՊԲՀ, 2004, N 3, էջ 254-275),* **Оганесян В. Э.** *Серебряный кубок из Карашамба (ՊԲՀ, 1988, N 4, p. 145-161),* **Սիմոնյան Հ.,** *Վերին Նավեր, գիրք Ա, Ե., 2006,* **նույնի՝** *Ներքին Նավերի N 4 դամբարանը (Հուշարձան, տարեգիրք, 5, Ե., 2010, էջ 7-20) և այլն]:*

[6] *Մ.թ.ա. III հազ. շումերական հերոսապատում-պոեմում հիշատակված Արատտայի տեղադրությունը Լ. Ն. Պետրոսյանն առաջարկել է Հայկական լեռնաշխարհում: Արատտա անվանումը նա համեմատել է Արարատ (Ուրարտու) անվանման հետ [***Պետրոսյան Լ. Ն.,*** *Հայ ժողովրդի փոխադրամիջոցներ (տե՛ս Հայ ազգաբանություն և բանահյուսություն. ժողովածու, 6, Ե., 1974, էջ 123), հմմտ. Kavoukjian M. Armenia, Subartu and Sumer. The Indo-European Homeland and Ancient Mesopotamia, Montreal, 1987, p. 68-70,* **Մովսիսյան Ա.,** *Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա, Ե., 1992, էջ 29-32]:*

[7] **Кифишин А.** *Географические воззрения древних шумеров при патеси Гудеа (2162-2137 гг. до н. э.) (Палестинский сб., вып. 13 (76), 1965, с. 64);* **Иванов Вяч. Вс.** *Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры гимна Вахагну (ՊԲՀ, 1983, N 4, էջ 32-33) և այլն:*

[8] **Մարտիրոսեան Ն.,** *Հայերէնի յարաբերութիւնը հեթիդերէնի հետ (Հանդէս ամսօրեայ, 1924, N 9-10, էջ 453),* **նույնի՝** *Նպաստ մը հեթ և հայ բառաքննության (ՊԲՀ, 1972, N 2, էջ 163-186):* **Капанцян Гр.** *Хайаса – колыбель армян. Этногенез армян и их начальная история, Е., 1956,* **Խաչատրյան Վ.**, *Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Ե., 1998,* **Ղազարյան Ռ.,** *Հայասայի քաղաքական և մշակութային պատմությունը, Ե., 2009 և այլն:*

[9] **Lang D. M.** *Armenia Cradle of Civilization, London, 1970, p. 9,* **Սարդարյան Ս.,** *Հայաստանը քաղաքակրթության օրրան, Ե., 2004 և այլն:*

[10] **Մանանդյան Հակոբ,** *Տիգրան Երկրորդը և Հռոմը, Ե., 1940, էջ 54-55,* **Սարգսյան Գ. Խ.,** *Հայկական տերությունը, նրա տեղն ու դերը Առաջավոր Ասիայում (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 565-573),* **Մանասերյան Ռ. Լ.,** *Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Ե., 1987, էջ 58-103 և այլն:*

Մ.թ. I դարը Հայոց Աբգար[11] թագավորի պատմական առաքելության և լուսապաշտական ակունքներից ընձյուղվող քրիստոնեական՝ Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ Հայ Առաքելական Եկեղեցու հաստատման ժամանակաշրջանն էր:

Հռոմեական կայսրության նվաճողական քաղաքականությանը դիմակայելու պայմաններում պարթևական թագավոր Վաղարշ I Արշակունու եղբոր՝ Տրդատ I-ի (65-88 թթ.)՝ Մեծ Հայքի գահին բարձրանալով և երկրի անկախության համար մղած պայքարի շնորհիվ Արշակունիների այս ճյուղը հարյուր տարի անց Հայոց արքաներ Վաղարշ II-ի (185-198 թթ.) և նրա որդու՝ Խոսրով I-ի (198- 215 թթ.) օրոք դարձավ հայկական ժառանգական հարստություն: Քրիստոնեության՝ որպես պետական կրոն աշխարհում առաջինը Հայաստանում հռչակվելով (301 թ.) և Մեսրոպ Մաշտոցի՝ հայ գրերի գյուտով (405 թ.) ու դրան հաջորդած Ոսկեդարյան գրական ժառանգությամբ հայ ժողովուրդը հարստացրեց հազարամյակների պատմություն ունեցող ազգային՝ հոգևոր-մշակութային գանձարանը, հզորացրեց իր դիմակայությունն արտաքին վտանգներին[12]:

Սասանյան Պարսկաստանի ու Արևելահռոմեական կայսրության (Բյուզանդիա) նվաճողական քաղաքականության պայմաններում, հայ Արշակունյաց հարստության անկումից հետո (428 թ.), ըստ Եղիշեի՝ «ի նախարարասն Հայոց անկանէր թագաւորութիւնն»[13], այսինքն, պետականության կրողը Հայաստանում մնում էր Հայոց նախարարական համակարգը, և Վարդան Մամիկոնյանի (450-451 թթ.) ու Վահան Մամիկոնյանի (481-484 թթ.) ղեկավարած՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ բարձրացան Մամիկոնյանների գլխավորած Տանուտերական իշխանապետությունն[14] ու Հայկազուն-Սիսակյան Առանյան Վաչագան Բարեպաշտի թագավորությունը (484 թ. - VI դ. առաջին կես)՝ Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում, Ուտիքում և հարակից տարածքներում[15]: VI դ. հայ

---

[11] **Մովսէս Խորենացի,** *էջ 142-156: Անանուն Եդեսացին նույնպես նշել է Ուռհայում գահակալած Աբգար V-ի (մ.թ.ա. 4 - մ.թ. 7 թթ., մ.թ. 13-50 թթ.) հայկական ծագման մասին [տե՛ս* **Անանուն Եդեսացի,** *Ժամանակագրություն, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծան. Լ. Տեր-Պետրոսյանի (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, Ասորական աղբյուրներ, Բ, Ե., 1982, էջ 195-196), տե՛ս նաև՝* **Դանիելյան Է.,** *Ս. Թադեոս առաքյալի ավանդության արտացոլումը հայ պատմագիտության մեջ, Հայաստանը և քրիստոնյա Արևելքը, 2000, էջ 49-54]:*

[12] *Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Ե., 1984, էջ 420,* **Դանիելյան Է.,** *Հայ գրի, թարգմանական և ինքնուրույն գրականության պատմական նշանակությունը քաղաքակրթությունների երկխոսության տեսանկյունից (21-րդ դար, 2010, N 1, էջ 13-24):*

[13] **Եղիշէ,** *Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1989, էջ 12:*

[14] *Ըստ Ղազար Փարպեցու (V դ.)՝ «զտէրութիւն Մամիկոնենից և զսպարապետութիւնն Հայոց»* (**Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն Հայոց, Ե., 1982, էջ 424), ըստ Սեբեոսի (VII դ.)՝ «զաշխարհն Տանուտերական իշխանանութեանն» (Պատմութիւն* **Սեբէոսի,** *Ե., 1979, էջ 76):*

[15] **Մովսէս Կաղանկատուացի,** *Պատմութիւն Ադուանից աշխարհի, Ե., 1983, էջ 51-53,* **Ուլուբաբյան Բ. Ա.,** *Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Ե., 1961, էջ 31,* **նույնի՝** *Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Ե., 1998, էջ 64-65,* **Դանիելյան Է.**, *Գանձասարի պատմություն, Ե., 2005, էջ 46,* **նույնի՝** *Մովսես Խորենացու ավանդազրույցի Սիսակ-Առանյան ճյուղի «նորագույն քննադատության» սնանկությունը (ՊԲՀ, 2008, N 2, էջ 186):*

ժողովրդի ապստամբությունները, ինչպես նաև VII դ. 40-ական թթ. արաբական խալիֆայության զորքերի ներխուժումների դեմ մղած կռիվները և Հայոց անկախ ամբողջական իշխանապետությունը (VII դ. երկրորդ կես)[16], VIII-IX դդ. հակախալիֆական ապստամբությունները հայ ազատագրական պայքարի հերոսական արտահայ-տություններն էին: Հայոց Բագրատունյաց (885-1045 թթ.), Վասպուրականի Արծրունիների (908-1021 թթ.), Կարս-Վանանդի (963- 1065 թթ.), Տաշիր-Զորագետի Կյուրիկյանների (966-1113 թթ.), Սյունիքի (970-1170 թթ.), Փառիսոսի (X դ. կես - 1044 թ.) թագավորու-թյունների, Արցախի՝ Խաչենի իշխանության (X-XVI դդ.)[17], Զաքարյանների իշխանապետության (XII դ. վերջ - XIII դ. առաջին տասնամյակներ), Կիլիկիայում Հայ-կական իշխանապետության (1080-1197 թթ.) ու թագավորության (1198-1375 թթ.) օրոք Հայոց քաղաքակրթական արժեհամակարգը հարստացավ մշակութային նոր ար-ժեքներով[18]: Հետագա դարերում Հայրենիքի պաշտպանության կենտրոններն էին Սյունիքը, Արցախը[19], Տարոն-Սասունը, Զեյթունը, Վանը և այլն:

Ծանր էին սելջուկյան, թաթար-մոնղոլական, այնուհետև՝ թուրք-պարսկական պատերազմների, բաժանումների (1555, 1639 թթ.) և դաժան բռնակալությունների հետևանքները: Արևմտյան Հայաստանի և Հայկական Կիլիկիայի զավթումը Օսմանյան կայսրության կողմից ուղեկցվում էր պատմական տեղանունների[20] նենգափոխու-

---

[16] **Тер-Гевондян А. Н.** *Армения и Арабский халифат, Е., 1977, с. 49-51.*

[17] **Ուլուբաբյան Բ.,** *Խաչենի իշխանությունը (X-XVI դդ.), Ե., 1975:*

[18] **Թորամանյան Թ.,** *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1 և 2, Ե., 1942, 1948:* **Орбели И. А.** *Памятники армянского зодчества на острове Ахтамар (Избранные труды, т. I, М., 1960);* **Ալիշան Ղ.,** *Միսուան, Վենետիկ, 1885:* **Strzygowski J.** *Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918;* **Токарский Н. М.** *Архитектура Армении IV-XIV вв., Е., 1961;* **Дурново Л. А.** *Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979;* **Измайлова Т. А.** *Армянская миниатюра XI в., М., 1979;* **Հասրաթյան Մ. Մ.,** *Ամարասի ճարտարապետական համալիրը (Լրաբեր, 1975, N 5, էջ 35-52),* **Այվազյան Արզամ,** *Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Ե., 1978,* **Հարությունյան Վ. Մ.,** *Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992,* **Ուլուբաբյան Բ., Հասրաթյան Մ.,** *Դաղիվանք (Հայկազյան հայագիտական հանդես, հ. Ը, Բեյրութ, 1980, էջ 7-54):* **Դանիելյան Է.,** *Գանձասարի վանքը, Ե., 2009 և այլն:*

[19] **Ռաֆֆի,** *Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987:*

[20] **Դանիելյան Է.,** *«Քարտեզագրական պատերազմը» և Հայոց տեղանունների պաշտպանության հիմնախնդիրը (http://blog.ararat-center.org/?p=160),* **նույնի՝** *Հայկական տեղանունների պաշտպանության հիմնախնդիրը տեղեկատվական պատերազմի քարտեզագրական ոլորտում (Տեղեկատվական անվտանգություն, 2008, N 3, էջ 13-15),* **նույնի՝** *Հայաստանն ու հայկական տեղանունները. Հայոց բնա-պատմական միջավայրի պաշտպանության գիտական առաջադրանքը (ՎԷմ, 2009, N 1, էջ 9-25),* **Սահակյան Լ.,** *Հայկական տեղանունների թուրքացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում (ՎԷմ, 2010, N 1, էջ 83-96):* **Sahakyan L.** *Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal, 2010.*

մով: Յուրաքանչյուր հայկական տեղանվան ոչնչացումը նշանակում էր թուրքերի իրականացրած՝ հայկական բնակչության բռնագաղթ և բնաջնջում հայրենի հողում, պատմական հիշողության ջնջում: Քաղաքակրթության ոչնչացումը թուրքական ավազակապետության (վայրենի՝ քոչվոր հիմքի վրա ստեղծված Օսմանյան կայսրությունը[21], այնուհետև՝ երիտթուրքերի վարչակարգը, ինչպես նաև հանրապետական Թուրքիան) անբաժան մասն է:

Հայոց ցեղասպանության ընթացքում Թուրքիան՝ որպես մարդկության և քաղաքակրթության դեմ հանցագործություններ կատարող, մեղադրվեց Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ընդունած Հայտարարությամբ (1915 թ. մայիսի 24)[22], որը թուրքերի ցեղասպանական հանցագործությունը դատապարտող միջազգային իրավունքի առաջին փաստաթուղթն է[23]: Այն ազդեց Սևրի պայմա-

---

[21] *XIX դարում թուրքի կերպարի մասին ձևավորված պատկերը սուլթան Աբդուլ Ազիզ I-ի (1861-1876 թթ.) օրինակով տվել է Մարկ Տվենը (1835-1910 թթ.). «Աբդուլ Ազիզը բնությամբ և դաստիարակությամբ ստոր, գազանային, տգետ, հետադիմող, սնոտիամոլ մի ժողովրդի՝ ...բռնակալության, անկշտության և արյան մի կառավարության ներկայացուցիչ է»* (**Mark Twain.** *The Innocents Abroad or the New Pilgrims' Progress, New York, 1964, p. 75):*

[22] *"...En présence de ces nouveaux crimes de la Turquie contre l'humanité et la civilisation…" [տե՛ս* **Beylerian A.** *Les grandes puissances, l'empire ottoman et les Arméniens dans les archives françaises (1914-1918): recueil de documents, Paris 1983, p. XLIII & document N 41; PRO, FO 371/2488/51010, 28 May 1915; History of the United Nations War Crimes Commission and the Development of the Laws of War. London, 1948,* **Shabas W. A.** *Genocide in International Law, Cambridge, 2000, p. 16]. Հայտարարությունում հատուկ նշվել է «նոր հանցագործություններ» արտահայտությունը, քանի որ աշխարհում հայտնի էին հայերի դեմ XIXդ. երկրորդ կեսից և XX դ. առաջին տասնամյակներին թուրքերի ցեղասպան գործողությունները:*

[23] *Փարիզի խաղաղության վեհաժողովի՝ «Պատերազմի հեղինակների պատասխանատվության և պատերազմի օրենքների խախտումների համար պատիժների պարտադրման հանձնաժողովը» իր եզրափակիչ զեկույցում կրկնել էր այդ Հայտարարության երկու սկզբունքները՝ (ա) քրեական պատասխանատվության ենթարկելը՝ «առանց հաշվի առնելու աստիճանը, ներառյալ պետության ղեկավարներին», (բ) «մարդկության օրենքների» դեմ գործած հանցագործությունների մեջ մեղավոր Կենտրոնական տերությունների հետ հիշատակվում էր Թուրքիան (* **Cherif Bassiouni M.** *Crimes Against Humanity in International Criminal Law, Boston,1992, p. 165-167, 170, n. 78, p. 173, n. 88): Իսկ 1919 թ. հունիսի 23-ին վեհաժողովի գերագույն խորհրդի՝ թուրքական պատվիրակությանը ներկայացրած պաշտոնական փաստաթղթում դաշնակից տերությունները փաստում էին, որ քրիստոնյա հայերի կոտորածն իրագործվել էր թուրքական կառավարության հրամանով (Documents on British Foreign Policy 1919-1939, 1st Series, London, 1952, vol. 4, p. 647): Սակայն Վերսալի պայմանագրում (1919 թ. հունիսի 28) ընդգրկվեցին միայն՝ գերմանական նախկին կայսր Վիլհելմ II-ի և նրա հրամանատարության տակ գործած ռազմական անձնակազմի համար՝ պատերազմի հանցանքների մեղադրանքով պատիժ սահմանող 227-րդ և 228-րդ հոդվածները, ինչպես նաև 231-րդ հոդվածը, որի համաձայն՝ Գերմանիան ընդունում էր իր և իր դաշնակիցների (որոնցից էր Թուրքիան) պատասխանատվությունն այն բոլոր կորուստների ու վնասների համար, որոնք նրանք Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում պատճառել էին Անտանտի կոալիցիայի դաշնակից և նրանց միացած պետություններներին ու նրանց քաղաքացիներին:*

նագրի վրա (1920 թ. օգոստոսի 10)[24]: Ինչպես նշել է Մ. Բասսիունին, «Սևրի պայմանագրի կողմերը նպատակ ունեին պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր «մարդկության դեմ հանցագործություններ» էին կատարել»[25]:

Գոյություն ունեն Թուրքիային դատապարտող բազում իրավական փաստաթղթեր[26]: Ժողովուրդների մշտական տրիբունալի (Փարիզ, 1984 թ. ապրիլի 13-16) դատավճռում սահմանվել է՝ «Հայկական բնակչությունը եղել և կազմում է մի ժողովուրդ, որի հիմնարար իրավունքները՝ թե՛ անհատական և թե՛ կոլեկտիվ, պետք է հարգվեին և պետք է հարգվեն միջազգային օրենքի համաձայն: Հայ բնակչության խմբերի բնաջնջումը՝ բռնագաղթի և կոտորածի միջոցով, ցեղասպանության հանցագործություն է... Երիտթուրքերի կառավարությունն այս ցեղասպանության հանցագործն է՝ 1915-1917 թթ. միջև կատարված գործողությունների առումով...»[27]:

Հայոց ցեղասպանությունը ժխտելով՝ Թուրքիան աշխարհը հեղեղում է կեղծիքով ու ստով, միևնույն ժամանակ պետական ահաբեկչություն է իրագործում՝ Ադրբեջանի հետ շարունակելով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի (Արցախ) Հանրապետության շրջափակումը:

Մարդկության և քաղաքակրթության դեմ գործած սեփական հանցագործությունները քողարկելու նպատակով՝ Թուրքիան «քարոզչական» տարբեր միջոցների է դիմում: Այսպես, 2005 թ. ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Անանի առաջարկով ստեղծված «Քաղաքակրթությունների դաշինքի»[28] II համաժողովի բացմանը (2009 թ., ապրիլի 6, Ստամբուլ) Թուրքիայի վարչապետ Էրդողանը ստերով լի մի «հայտարարություն» արեց. «…Թույլ տվեք մեծ երջանկությամբ հայտարարել, որ այս երկիրը գուցե եղել է խաղաղության, հանդուրժողականության, գոյակցության մշակույթի,փո-

---

[24] *The Treaties of Peace 1919-1923, vol. II, Carnegie Endowment for International Peace, New York, 1924.*

[25] **Bassiouni M. Ch.** *op. cit., p 174:*

[26] *Իսկ «Իշխանությունը և արդարությունը միջազգային հարաբերություններում» գրքում քննվում է 1919 թ. Վերսալի պայմանագիրը (Power and Justice in International Relations. Interdisciplinary Approaches to Global Challenges, Ashgate, 2009), բայց անդրադարձ չի կատարվում Թուրքիայի ցեղասպան հանցագործությունները բացահայտող իրավական փաստաթղթերին:*

[27] *A Crime of Silence, The Armenian Genocide, Permanent Peoples' Tribunal. London, 1985, p. 227.* **Ներսիսյան Մ. Գ., Խառատյան Ա. Ա.,** *Միջազգային հասարակական կարծիքը արևմտահայության ցեղասպանության մասին (ՊԲՀ, 1986, N 1, էջ 71-84): Արդեն ավելի քան քսան երկիր ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Յուրաքանչյուր նոր ճանաչող երկրի հասցեին Թուրքիան սպառնալից հայտարարություն է անում:*

[28] *Որում ակտիվ դերակատարում ունեն Իսպանիայի և Թուրքիայի վարչապետ-ները (http://www.unaoc.org/rioforum/): Որոշ փորձագետներ դեմ են ՄԱԿ-ի շրջանակում «Քաղաքակրթությունների դաշինքի» ստեղծմանը (տե՛ս* **Schaefer B.** *The U. S. Should Oppose the Proposed U. N. Alliance of Civilizations ("Backgrounder", 2007, # 2009, http://www.heritage.org/Research/Reports/2007/02/The-US-Should-Oppose-the-Proposed-UN-Alliance-of-Civilizations և այլն):*

խաղարձ կարեկցանքի ու հարգանքի հանգրվան[29]... Ստամբուլը նույնպես ունի իր պատշաճ տեղն աշխարհում՝ որպես մի քաղաք, որը պարփակում և ներդաշնակում է մշակույթները, քաղաքակրթությունները, ռասաները, կրոնները և լեզուները՝ պատմության ձուլման կաթսայում[30]: Ստամբուլն անվանվելով 2010 թ. մշակույթի եվրոպական մայրաքաղաք՝ շարունակում է բարեգթության և հանդուրժողականության ուղերձ հղել ամբողջ աշխարհին, ինչն արել է պատմության ընթացքում… Ոչ միայն Ստամբուլն, այլև համարյա ամեն քաղաք Թուրքիայում այսօր աջակցում է խաղաղության, ներդաշնակության և հանդուրժողականության խորհրդանիշներին, ո-րոնք գոյություն են ունեցել ամբողջ պատմության ընթացքում[31]... Աղթամարի եկեղեցին՝ Վանում, Աբրահամ մարգարեի Ձկան լիճը՝ Շանլի Ուրֆայում... ամփոփում են մարդկության պատմությունը… Կույս Մարիամի տունը՝ Իզմիրում, ինչպես նաև Սբ.Նիկոլասի եկեղեցին՝ Անթալիայում մեր 2000-ամյա գոյակցության մշակույթի

---

[29] *Ստորև բերվող Պատմական տեղեկանքներում՝ փաստական նյութի հիման վրա ներկայացնում եմ իրական պատկերը: Պատմական տեղեկանք. 1) Էնվեր փաշայի 1916 թ. հունվարի 5-ի հրամանագրից՝ «Օսմանյան երկրում հայկական, հունական, բուլղարական և այլ ոչ մահմեդական ժողովուրդներին պատկանող նահանգի, գավառի, գյուղաքաղաքի, գյուղի, սարի, գետի և բոլոր այլ անունների վերածումը թուրքերենի անհրաժեշտ է» (Թուրքական ռազմաքաղաքական իշխանություններին առաքված՝ գլխավոր հրամանատարի տեղակալ, ռազմական նախարար Էնվեր փաշայի հրամանագրի թարգմանությունը տե՛ս* **Սահակյան Լ.,** *նշվ. աշխ., էջ 95): 2) 1984 թ. Ժողովուրդների մշտական տրիբունալի դատավճռից՝ «Հայոց ցեղասպանությունը նաև միջազգային հանցագործություն է, որի համար թուրքական պետությունը պետք է պատասխանատվություն կրի...»(A Crime of Silence, p. 227):*

[30] *Պատմական տեղեկանք. 1) Թուրքերի կողմից Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսի գրավման (1453 թ.) մասին մի վանական գրել է. «Երբեք չի եղել և չի լինի ավելի ահավոր պատահար»(***Palmer A.,** The Decline and Fall of the Ottoman Empire, New York, 1992, p. 1-2): 2) XXI դ. շեմին ամերիկացի լրագրող Ռոբերտ Կապլանը, Երևանում այցելելով Ցեղասպանության թանգարան, Թուրքիայի ցեղասպան հանցագործության մասին իր գրքում քաղաքակիրթ աշխարհին տեղեկացրել է, որ 2.133190-ի չափ հայ բնակչություն բնաջնջվել և բրոնագաղթի է ենթարկվել, 1996 հայկական դպրոցներ և 2925 եկեղեցիներ ոչնչացվել են: Ռ. Կապլանը իր ճանապարհորդությունների ժամանակ անցել է Արևմտյան Հայաստանով և հասել մինչև Տրապիզոն ու վկայել, որ, բացի հատ ու կենտ քանդված եկեղեցիների ավերակներից, «հայկական քաղաքակրթության ամեն մի հետք ոչնչացված է...» (***Kaplan R.** Eastward to Tartary, New York, 2000, p. 318):*

[31] *Պատմական տեղեկանք. 1915 թ. ապրիլի 24-ին, լույս 25-ի գիշերը և հաջորդ օրերին Կոստանդնուպոլսում (Ստամբուլ) ձերբակալվեցին հայ մտավորականները: Գրիգոր Զոհրապին, Դանիել Վարուժանին, Ռուբեն Սևակին, Միամանթոյին, Ռուբեն Զարդարյանին, Երուխանին և շատերին թուրք դահիճները դաժանորեն խոշտանգեցին ու սպանեցին: Ականատես լինելով թուրքերի ոճրագործություններին՝ Կոմիտասը հոգեպես ցնցվեց ու հիվանդացավ:*

մի քանի կենդանի օրինակներն են[32]: Մեր քաղաքներն, ինչպիսին են... Շանլի Ուրֆան, Վանը, Դիարբեքիրը, Տրաբզոնը՝ յուրաքանչյուրը հանդուրժողականության հուշարձան է[33], որ գրավել է աշխարհի ուշադրությունը: Թուրքիայում, ինչպես աշխարհի շատ այլ երկրներում, նույնպես եղել են սադրիչ գործողություններ, որոնց նպատակն էր վնասել եղբայրության և բարեկամության մթնոլորտը: Սակայն մեր հասարակությունը՝ հազարամյակների ընթացքում ձևավորված հանդուրժողականության և երկխոսության մշակույթի մեջ երբեք թույլ չի տվել, որ գերակշռեն այսպիսի պառակտիչ գործողություն-ները և միշտ նախընտրել է միասին կանգնել այն դավերի դեմ, որոնց նպատակն է նսեմացնել մեր բարեկամությունը[34]...

---

[32] *Պատմական տեղեկանք. 1) 2000-ամյա «գոյակցության մշակույթի» մասին բարբաջող թուրք վարչապետի նախնիները սերում էին անդրալթայան տափաստաններից խուժած թյուրք քոչվորներից: Պատմաբան Առնոլդ Թոյնբին գրել է. «Նրանց անվանադիր նախնի Օսմանը (1280-1324 թթ.)... դեպի Անատոլիա (Փոքր Ասիա - Դ. Է.) գլխավորեց թյուրք փախստականների անանուն մի ավազակախմբի, որը ներկայացնում էր մարդկային թափթփուկների մի չնչին բեկոր»* (**Toynbee A. J.** *A Study of History, vol. I-IV, London, New York, Toronto, 1955, II, p. 151): 2) Մ.թ.ա. I դ. վերջում - մ.թ. I դ. առաջին կեսին Ուռհա-Եդեսիան Հայոց Աբգար թագավորի մայրաքաղաքն էր: 1915 թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերին տեղի ունեցավ Ուռհա-Եդեսիայի հայերի ինքնապաշտպանությունը, որը թուրք ասկյարները խեղդեցին արյան մեջ: 1984 թ. թուրքերն անվանափոխեցին քաղաքի անունը՝ «Շանլի Ուրֆա»: 3) 2010 թ. օգոստոս, Կարին Տոնոյան («Հայ ասպետ» հեռուստախաղի հիմնադիր). «Երբ Աղթամարի Սուրբ Խաչում էինք, ցանկացանք մոմեր վառել, սակայն թուրք ոստիկանը գոռգոռալով պահանջեց, որ դուրս գանք եկեղեցուց: Նա կանչեց մյուս ոստիկանին: Երեխաները «Տէր ողորմեա»-ն շարունակեցին երգել կիսավեր խորանի մոտ: Երբ խաչքարերի մոտ Դերգորի անապատից հետներս տարած խունկի համար սկսեցինք կրակ անել, թուրք ոստիկանը գոռգոռալով ոտքը դրեց խունկի վրա» (http://news.am/arm/news/28312.html):*

[33] *Պատմական տեղեկանք. 1) 1895 թ. Տրապիզոնում թուրքերը տասնյակ հազարավոր հայերի կոտորեցին, այնուհետև շատերին դուրս բերեցին բաց ծով և ջրախեղդ արեցին: 1894-1896 թթ. Սասունում, Զեյթունում, Վանում և այլ վայրերում թուրք վայրենին սպանեց ավելի քան 300 հազար հայ, 1909 թ. Կիլիկիայում՝ 35-40 հազար (***Нерсисян М. Г., Саакян Р. Г.** *Геноцид армян в Османской империи, сб. документов и материалов, Е., 1983, с. 140-147, 195,* **Սիմոնյան Հ. Ռ.,** *Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Ե., 2009, էջ 206): 2) 1915 թ. հուլիս՝ Տրապիզոնում թուրք ժանդարմները մեծահասակ հայերին բռնագաղթի ենթարկելուց և կոտորելուց հետո երեխաներին նստեցրին նավակներ ու բաց ծովում սպանեցին և պարկերի մեջ դնելով՝ ջուրը նետեցին: Մի քանի օր անց ալիքները փոքրիկների մարմիններն ափ հանեցին (A Crime of Silence, p. 56):*

[34] *Պատմական տեղեկանք. ա) Ոչ թե «հազարամյակների հասարակություն...», այլ հինգհարյուրամյա թուրք ավազակապետություն: Նյու Յորքի Divine Paternity եկեղեցու քահանա, դոկտոր Չարլզ Իթոնն իր խոսքում ասել է. «Հայաստանում խորանում է ողբերգությունը... Գործնական միջամտության ժամանակը հասունացել է: 500 տարի ձգվող թուրքական բռնակալությունը հիմնականում բնութագրվել է իր անմարդկային դաժանություններով: Բնաջնջման քաղաքականությունում թուրքական գազանությունները 1892 թ. իրենց գագաթնակետին հասան: Երկու-երեք տարում թուրքական կառավարությունն ամեն միջոցով ձգտում էր կործանել քրիստոնեական բոլոր հաստատությունները, որպեսզի քրիստոնյաների համար ապրելը թուրքական գերիշխանության տակ գտնվող տարածքում անհնար դարձնի» (Rev. Dr. Ch. H. Eaton, "A Word on the Armenian Atrocities and America's Duty"– The New York Times, November 25, 1895, http://query.nytimes.com/mem/archive-free/pdf?res=F50816FA3A5D15738DDDAC0A94D9415B8585F0D3), բ) Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանի՝ ռայխսկանցլերին 1915 թ. դեկտեմբերի 7-ին ուղարկված զե-կուցագրից. «Անցած շաբաթ Էնվեր փաշայի ու Խալիլ բեյի, իսկ այսօր Ջեմալ փաշայի հետ ունեցած զրույցում ես լրջորեն քննարկում էի հայերի հանդեպ կատարվող գազանությունները և ընդգծեցի, որ ինչպես դաշնակից արտասահմանյան երկրների, այնպես էլ Գերմանիայի լայն շրջաններում դժգոհություն և խորը*

Թուրքիայի քաղաքական փիլիսոփայությունը միշտ հիմնված է եղել ոչ թե թշնամիներ ստեղծելու, այլ բարեկամություն ձեռք բերելու վրա... Կրոնի, մշակույթի և քաղաքակրթության հիման վրա այսօր մեր առջև կանգնած խնդիրներն արդյունք են երկարատև պատմության[35]... Ահաբեկչությունը ներկայումս միջազգային խնդիր է և այն ուղղված է ոչ թե մի որևէ երկրի, այլ ամբողջ մարդկության դեմ... Մենք այսօր պետք է քայլեր ձեռնարկենք և հաստատենք համերաշխության ամուր մշակույթ[36]... Ճշմարտություն է, որ «Քաղաքակրթությունների դաշինքը» նախաձեռնվել է Թուրքիայի և Իսպանիայի համահովանավորությամբ, այնուհետև դրվել է ՄԱԿ-ի հովանավորության տակ... Մեզ միավորող տարրերը գերազանցում են բաժանող տարրերին... Մենք պետք է մտապահենք, որ մարդկության պատմության մեջ ներդաշնակությունը միշտ բերել է բարեկեցություն, իսկ կոնֆլիկտը՝ զրկանք»[37]:

վերդրվմունք են արտահայտում…» (**Барсегов Ю.** *Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, ч. 2, N 261, М., 2003):*

[35] *Պատմական տեղեկանք. 1) Օսմանյան դիվանագետ Ահմադ Ռեսմի Էֆենդին (1694-1783 թթ.) գրել է. «Մեր քաղաքական իմաստուններին Ալլահը ոչ խելք է շնորհել, ոչ էլ փորձառություն: Պատմության ուսումնասիրությունը նրանց գործը չէ...» (տե՛ս* **Ադոնց Ն.,** *Հայկական հարցի լուծման շուրջ, Ե., 1989, էջ 56-57): 2) Վիկտոր Հյուգոն (1802-1885 թթ.) թուրքերի մահասփյուռ ասպատակություններից քաղաքակիրթ աշխարհի կրած աղետալի ավերածությունների մասին գրել է. «Այստեղով թուրքերն են անցել. ամեն ինչ ավերված է ու սգավոր» [***Hugo V.*** *L'enfant (Oeuvres complètes. Poésie I. Paris, 1985, p. 476)]:*

[36] *Պատմական տեղեկանք. Փոքրամասնությունների իրավունքների միջազգային խմբի (Minority Rights Group International) հաշվետվության համաձայն՝ 1974 թ. թուրքական ներխուժումը Կիպրոս ուղեկցվում էր նապալմի օգտագործմամբ և ահաբեկչություն էր սփռում հունական ծագմամբ կիպրացի գյուղացիների միջավայրում (http://mnenia.zahav.ru/ArticlePage.aspx?articleID=13644&categoryID=1):*

[37] *The Alliance of Civilizations Second Forum Opening Statement. Recep Tayyip Erdoğan, Prime Minister of the Republic of Turkey (April 6, 2009) http://www.unaoc.org/images/erdogan%20forum%20speech%20(4).pdf Պատմական տեղեկանք. 1)* **Գլադստոն Վ.** *«Ուր էլ հայտնվել են օսմանները՝ լայն արյունոտ հետք են թողել ամենուր և ուր, որ հասնում էր նրանց տիրապետությունը՝ քաղաքակրթությունը կործանվում, չքանում էր տեսադաշտից» (***Гладстон В.** *Болгарские ужасы и Восточный вопрос, СПб., 1876, с. 6): 2) 1917 թ. հունվարին դաշնակից տերությունների ներկայացուցիչներն ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին ուղղված պատասխանում հայտարարել էին, որ «իրենց նպատակներից մեկն է Եվրոպայից դուրս մղել Օսմանյան կայսրությանը՝ որպես որոշակիորեն օտար՝ արևմտյան քաղաքակրթությանը» (***Hacobian A. P.*** *Armenia and the War. An Armenian's Point of View with an appeal to Britain and the Coming Peace Conference with a Preface by the Rt, Hon. Viscount Bryce, London, 1917, ch. III):*

Սադրիչ ապատեղեկատվության այսպիսի պաշարով թուրք վարչապետը դեռևս 2005 թ. առաջարկել էր ստեղծել «թուրք և հայ պատմաբանների հանձնաժողով»[38], իբրև թե «1915-1918 թթ. իրադարձությունները քննարկելու», իսկ իրականում՝ Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար[39]: Սակայն հենց 2005 թ. Հայաստանի Հանրապետությունը մերժեց թուրք վարչապետի առաջարկը[40]: Քննարկման ենթակա չէ Հայոց ցեղասպանությունը՝ վկան են իր հայրենի բնօրրանում ցեղասպանված 1,5 միլիոն զոհերի հիշատակը, հարյուր հազարավոր բռնագաղթի ենթարկվածներն ու նրանց ժառանգները, Թուրքիայի կողմից բռնազավթած հայկական տարածքներում ավերվող հուշաձանները: Թուրքիան ծրագրում է իր հակահայկական քաղաքականության իրագործման «մարտակառքին» լծել «Քաղաքակրթությունների դաշինքը»[41], այսինքն՝ իր խնդիրները լուծել պանթուրքիզմի (համաթրքություն) և պանթուրանիզմի[42], նեոօսմանիզմի «գաղափարական» համաշխարհայնացման միջոցով:

2010 թ. մայիսի 27-29-ին Ռիո Դե Ժանեյրոյում կայացած «Քաղաքակրթությունների դաշինքի» III համաժողովի «հոչակագրի» կետերից է. «Բոլոր մշակույթները, քաղաքակրթությունները և կրոնները նպաստում են մարդկության հարստացմանը»[43], իսկ Թուրքիան շարունակում է իր հակահայկական՝ ներքին և արտաքին քաղաքականությունը: Համաժողովի քննարկումներից էր «Պատմությունը՝ որպես միջմշակութային երկխոսության չափանիշ» թեման, որի մասին ամփոփիչ տեղեկությունից հետևում է, որ շեշտը դրվել է «պատմության բարդությունը հասկանալու նպատակով» դրա դասավանդման վրա, ուստի այդ գործում կարևոր է համարվել աշխար-

---

[38] *Անհեթեթություն է այդ մասին խոսել, քանզի Թուրքիայում «պատմագիտությունը» ծառայեցվում է պանթուրքիզմի գաղափարախոսությանը և թուրք «պատմաբանները» պաշտոնապես զբաղված են պատմության կեղծարարությամբ:*

[39] *Հայոց ցեղասպանությունը ժխտող թուրք պաշտոնյաները չեն ցանկանում խոստովանել, որ Առաջին աշխարհամարտի ավարտի և քեմալական շարժման սկսվելու միջև՝ «նախամերժողական ժամանակաշրջանն» էր: Հետպատերազմյան շրջանում թուրքական կառավարության պաշտոնական փաստաթղթերում, ինչպես նշում է Վ. Դադրյանը, օգտագործում էին «մարդկության դեմ հանցագործություններ» տերմինը (***Dadrian V.*** *The Armenian Genocide as a Dual Problem of National and International Law. - University of St. Thomas, Journal of Law and Public Policy, vol. IV, N 2, 2010, p. 61):*

[40] *http://www.azatutyun.am/content/article/1576698.html*

[41] *Պորտուգալիայի նախկին նախագահ Սամպայոն, որին Էրդողանն իր ստերով լի «հայտարարությունում» անվանել է «դաշինքի դեմքը և ձայնը», «գոհունակություն է արտահայտել «այդ համաշխարհային նախաձեռնության ստեղծման մեջ Թուրքիայի ակտիվ դերի» առթիվ. տե՛ս http://www.todayszaman.com/tz-web/news-208688-102-sampaio-the-alliance-of-civilizations-gaining-visibility.html*

[42] **Зареванд.** *Турция и пантуранизм. Введение Мандельштама А. Н., Париж, 1930.*

[43] *http://sistemas.mre.gov.br/kitweb/datafiles/Alianca/ptbr/file/Draft_declaration_Rio_10_05_27. pdf*

հում երիտասարդության հետ տարվող աշխատանքը[44]: Էրդողանի 2009 թ. «հայտարարությունից» երևում է, թե ինչ գաղափարական ուղղվածությամբ է ընթանալու «պատմության դասավանդումը»: Ավելին, ըստ III համաժողովի հայտարարությունների, Ադրբեջանի կառավարության առաջարկով, «Քաղաքակրթությունների դաշինքի» «համաշխարհային երիտասարդական շարժման» առաջին կոնֆերանսը կայանալու էր Բաքվում, 2010 թ. հոկտեմբերին[45]: Թուրքիայի և Ադրբեջանի «քարոզչական» գործողությունները հուշում են նման «նախաձեռնությունների»՝ պանթուրքիզմից բխող հակահայկական ուղղվածությունը:

Թուրքիայի վարչակարգը քաղաքակրթական ասպարեզում ավազակային թալան կատարելով՝ պանթուրքիզմի գաղափարախոսությամբ ոտնձգություն է անում նաև «Մետաքսի ճանապարհ» միջազգային ծրագրի հանդեպ: Խեթական և բյուզանդական պատմամշակութային ժառանգությունը թալանելիս՝ թուրքերը նրանց անվանումները, այնուամենայնիվ, հիշատակումն, իսկ Հայոց տարածքային և պատմամշակութային ժառանգության՝ ցեղասպանությամբ զավթած մասը ոչնչացնելով, հափշտակելով, կեղծելով և «սեփականացնելով»՝ դրա հայկական լինելը բացարձակապես լռության են մատնում: Թուրք կեղծարարները, Արևմտյան Հայաստանը բռնազբոսիկ կերպով «ներկայացնելով» որպես «Անատոլիայի» մաս[46], աղավաղված տեղանունների օգտագործմամբ հորինում են պանթուրքիզմին ծառայող մի ստահոդ «պատմություն». «Քարավանային ուղիներով մի մայրցամաքից մյուսը տեղափոխելով մետաքս, ճենապակի, համեմունքներ և թանկարժեք քարեր՝ Ասիայում ընթանում էին մի քանի երթուղիներով՝ մինչև Անատոլիա ժամանելը... Անատոլիան այս ուղիների խաչմերուկն էր: Անատոլիայով անցնող Մետաքսի ճանապարհի վրա գտնվող գլխավոր քաղաքներն էին՝ հյուսիսում՝ Տրաբզոնը, Էրզրումը, Սըվասը, Թոքատը, Ամասիան… հարավում՝ Դիարբեքիրը, Մալաթիան… Կենտրոնական Ասիայում թուրքական հանրապետությունների անկախանալուց հետո բարձրացվեց Մետաքսի ճանապարհը վերակենդանացնելու գաղափարը՝ որպես առևտրական ուղու և մշակութային ու պատմական տոհմիկ արժեք...»[47]: Այսինքն, թուրքերը ոչ միայն «սեփականացնում» են Մեծ Հայքի արևմուտքով (Կարին[48]-Էրզրում, Ամիդ-Դիարբեքիր) և

---

[44] *III UN Alliance of Civilizations Forum Rio de Janeiro, Brazil, May 27-29, 2010. May 28 Thematic Sessions Summary, p. 4.*

[45] *Ibid., Major announcements, p. 6.*

[46] *Իրականում Անատոլիան՝ իր բոլոր մասերով (արևելյան, արևմտյան, հարավային, հյուսիսային) վերաբերում է միայն Փոքր Ասիային, որը Հայկական լեռնաշխարհից արևմուտք է:*

[47] *"All About Turkey", Silk Road, Burak Sansal 1996–2010, a certified professional tour guide in Turkey. http://www.allaboutturkey.com/silkroad.htm*

[48] *Հայք-Հայասայի Կարանի թագավորի (մ.թ.ա. XIV դ. կեսեր) անունով է կոչվել Բարձր Հայքի Կարին քաղաքը: Ներկայումս թուրք-ավստրալական հնագիտական խումբը պեղումներ է կատարում Բարձր Հայքի տարածքում, սակայն պեղումների արդյունքների հրապարակումներում հայկական պատկանելության մասին ոչինչ չի ասվում: Հայկական լեռնաշխարհի փոխարեն նշում են «Արևելյան Անատոլիա» և բոլոր տեղանուններն օգտագործում են թուրքերեն ձևով, ինչը բացարձակապես նենգափոխում է հայկական պատմամշակութային ժառանգության պատկերը: Հակառակ նրանց կեղծարարության, բրոնզի դարով ժամանակագրվող նյութերը վկայում են, որ Հայասայի տարածքն ամբողջ Հայկական լեռնաշխարհի էթնոմշակութային տարածքի օրգանական մասն է կազմել, որի «արմատները մ.թ.ա. III հազարամյակում*

Փոքր Հայքի (Սեբաստիա-Սըվաս, Մելիտենե[49], Թոքատ[50]) տարածքներով անցած Մետաքսի ճանապարհը, այլև միջինասիական հանրապետությունները «թուրքական» են «հոչակում»: Անհրաժեշտ է, օրինակ, հիշել, որ միջինասիական ժողովուրդներից տաջիկները հնուց իրանական էթնոլեզվական աշխարհին են պատկանում:

Թուրքիան պետական մակարդակի է բարձրացնում իր պանթուրանական ծրագիրը, ինչպես երևում է հետևյալ տողերից. «Զբոսաշրջության մինիստրությունը ծրագրում է վերագործարկել Մետաքսի ճանապարհը, որի վրա դեռևս կանգուն են մեր մշակույթի այս եզակի նմուշները»[51]: 2008 թ. հունիսի 10-ին Չիկագոյում՝ «Կենտրոնասիական արդյունավետության հետազոտական կենտրոնի» և «Պակիստանի ակումբի» ու «Կոմերցիոն կցորդի օֆիսի», Թուրքիայի գլխավոր հյուպատոսության և կոմերցիոն բաժնի, Պակիստանի հյուպատոսի հովանավորությամբ կազմակերպված «Նոր Մետաքսի ճանապարհի բիզնեսային հնարավորությունները» կոնֆերանսում Թուրքիայի և Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցիչները Հայաստանի Հանրապետության հասցեին լկտիաբար հնչեցրեցին բացարձակապես կեղծ «հայ-տարարություններ»՝ հաղթանակած Արցախի ազատագրված տարածքների կապակցությամբ: Պատմության մեջ այդպիսի դեպք չի եղել, որ իր հայրենի հողերն ազատագրած

էին, և որն իր շարունակական զարգացումն է ունեցել նաև հետագա դարերում» (**Ղազարյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 101, 121): Հայասայի դարաշրջանի մշակույթը բնիկ հայկական է:*

[49] *Դիոկղետիանոս կայսեր ժամանակ Փոքր Հայքի գլխավոր քաղաքը Մելիտենեն էր, իսկ երբ Թեոդոսիոս Ի-ը 386 թ. Փոքր Հայքը բաժանեց Առաջին Հայք և Երկրորդ Հայք նահանգների, Սեբաստիան դարձավ Առաջին Հայքի կենտրոնը (* **Адонц Н.** *Армения в эпоху Юстиниана, Е., 1971, с. 74, 85, 89):*

[50] *Այն հնագույն ժամանակներից եղել է արհեստների ու առևտրի կենտրոն: XIX դ. վերջին ունեցել է 50000 բնակիչ, որից 30000-ը հայեր էին: Քաղաքում այդ ժամանակ գործում էին 7 առաքելական, մեկական կաթոլիկ և ավետարանական եկեղեցի, կային 5 վարժարան և 3 մանկապարտեզ: Մեծ Եղեռնի ժամանակ թուրք ասկյարները քաղաքն ավերեցին (* **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.,** *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Ե., 1988, էջ 466):*

[51] http://www.allaboutturkey.com/silkroad.htm *Իսկ ներկայումս պանթուրքիզմի գաղափարախոսությունն արտահայտող Թուրքիայի նույն հիմնարկը հրավերներ է ուղարկում մասնակցելու «Սևծովյան տարածաշրջանի Մետաքսի ճանապարհ նախագծի առաջին փուլի» ՝ «Մետաքսի ճանապարհ Սևծովյան տարածաշրջանում և Արևելյան Անատոլիայում» աշխատանքներին: «Նախագծում» բացարձակապես կեղծված են Արևմտյան Հայաստանի պատմության և պատմական աշխարհագրության տվյալները. Արևմտյան Հայաստան հասկացությունը նենգափոխելով «Արևելյան Անատոլիայով» ՝ այն «ներկայացնում» են որպես ոչ-հայկական, ինչը Հայոց ցեղասպանության շարունակությունն է: Թուրք կեղծարարների «նախագիծն» անընդունելի է:*

ժողովրդին պարտված հակառակորդը փորձի պայմաններ թելադրել: Այնինչ Թուրքիան բնիկ հայերի բնաջնջմամբ՝ Հայոց ցեղասպանության միջոցով բռնազավթել է Արևմտյան Հայաստանը, Հայկական Կիլիկիան և Հայոց Միջագետքը, իսկ իր հովանավորած՝ արհեստածին, ագրեսոր «Ադրբեջանը» շարունակում է բուն հայկական տարածքների՝ Նախիջևանի, Ուտիքի, Արցախի հյուսիսային[52] և արևելյան՝ դաշտային որոշ մասերի բռնազավթումը:

XX դարի վերջին ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնած՝ Չինաստանից Առաջավոր Ասիայի և Միջերկրական ծովի ավազանի երկրները ձրգվող պատմական «Մետաքսի ճանապարհին»[53] նվիրված միջազգային ծրագրին մասնակցելու համար ՀՀ ԳԱԱ-ն առաջարկեց ամբողջ Հայկական լեռնաշխարհն ընդգրկող նախագիծ: Որոշ ժամանակ անց միջազգային բնույթի միջոցառումներից և ինտերնետ-կայքերից[54] երևաց, որ միայն Արևելյան Հայաստանի մի մասն ընդգրկող՝ Հայաստանի Հանրապետության տարածքն է ներկայացված այդ ծրագրում: Այնինչ պատմական սկզբնաղբյուրներից հայտնի է, որ Հայաստանով անցնող Մետաքսի ճանապարհի մայրուղիների վրա հին և միջին դարերում գտնվել և բարգավաճել են Հայոց մայրաքաղաքներն ու քաղաքները՝ Արմավիր, Վան, Էրեբունի-Երևան, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ (Աղձնիքում), Արցախի և Ուտիքի Տիգրանակերտներ, Նախիջեվան, Ջուղա, Խրամ, Դվին, Անի, Կարս, Մանազկերտ, Կարին...[55]: Անհրաժեշտ է ամբողջ Հայաստանին (Հայկական լեռնաշխարհ և Կիլիկիա) վերաբերող Մետաքսի ճանապարհի հատվածն ընդգրկել միջազգային ծրագրերում: Նշանակալից է, որ Հայոց տերության մեջ Տիգրան Բ Մեծը իր քաղաքակրթական գործունեությամբ[56] հսկողություն էր սահմանել Մետաքսի ճանապարհի ընդարձակ հատվածի՝ Հնդկաստանի արևմտյան սահմանից՝ Պարթևստանի վրայով մինչև Միջերկրական ծո-

---

[52] **Karapetyan Samvel,** *Northern Artsakh, Yerevan, 2007, p. 19.*

[53] **Дитмар А. Б.** *От Птолемея до Колумба, М., 1989, с. 109-142.*

[54] *http://www.silkroad.travel/countries/Armenia/armenia Գերմանիայի պետական մինիստր Գ. Էրլերը Դաշնային արտաքին գործերի մինիստրությունում 2008 թ. մայիսի 29-ին տեղի ունեցած միջազգային «Եվրոպական միությունը և թուրքական հեռանկարները Սևծովյան տարածաշրջանային համագործակցությունում» կոնֆերանսում մասնավորապես նշել է. «Թուրքիան իր ջանքերը կենտրոնացրել է Կասպիական նավթի և գազի պաշարները դեպի Արևմուտքի շուկաները տեղափոխելու, այսինքն՝ Արևելք-Արևմուտք էներգիայի միջանցքի իրականացման համար, որը հաճախ հիշատակվում է որպես XXI դարի Մետաքսի ճանապարհ: Կովկասը և Կենտրոնական Ասիան Եվրոպայի հետ կապող խողովակաշարային նախագծերը էական կլինեն տարածաշրջանի՝ Արևմուտքին ինտեգրացման գործում: Ապահով և կոմերցիոն տեսակետից շահավետ խողովակաշարերը կօգնեն տարածաշրջանին բերել կայունություն և բարգավաճում» (http://www.suedosteuropa-gesellschaft.com/pdf_2008/aktuell/black_sea/erler.pdf):*

[55] **Манандян Я. А.** *О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. – XV в. н. э.), Е., 1954,* **Мартиросян А.** *На великом шелковом пути, Е., 1998.*

[56] **Դանիելյան Է.,** *Տիգրան Մեծի քաղաքակրթական գործունեության ռազմավարությունը (ՊԲՀ, 2006, N 2, էջ 3-12):*

վի ավազանի երկրները ձգվող մայրուղիների առաջավորասիական համակարգի մեծ մասի վրա՝ ապահովելով դրա պետական պաշտպանությունը:

Պատմության և պատմական աշխարհագրության նենգափոխման առաջին գծում են Թուրքիան ու Ադրբեջանը: Ավելին, այսօր Հայաստանի Հանրապետությունում գործող որոշ ոչ-պետական կազմակերպություններ, ինչպես նաև հրապարակումներ[57], վտանգներ ներկայացնող գաղափարներ են ներմուծում՝ ախտահարելով թե՛ պատմագիտության, թե՛ կրթական և թե՛ քաղաքագիտական ոլորտները:

2008 թ. «Կովկասի ինստիտուտը» Ստամբուլում կազմակերպել էր «գիտաժողով», որի նյութերը ինստիտուտի տնօրեն Ա. Իսկանդարյանի խմբագրությամբ հրատարակվեցին մի ժողովածուի մեջ[58], որում առկա են Հայաստանի ազգային անվտանգությանը սպառնացող գաղափարական ու տեղեկատվական վտանգներ[59]՝

---

[57] *Օրինակ՝ թուրք կեղծարար Մ. Իշքիլին «Անատոլիա թերակղզին» (այսինքն՝ Փոքր Ասիան) «տեղափոխել է» արևելք՝ գրելով. «...Կարսի շրջանը ծածկում է Անատոլիական թերակղզու հյուսիս-արևելյան անկյունը...»: Վկայակոչելով ինչ-որ «աշխարհագետների»՝ Իշքիլին, էլ ավելի նենգափոխելով Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական տվյալները, նախ գրել է. «Էրզրում-Կարս կոչվող շրջանը, համաձայն աշխարհագետների՝ Անատոլիական թերակղզու ամենից բարձր մասն է... Կարսի շրջանը Արևելյան Անատոլիայի ամենից քիչ հայտնի շրջաններից է...», այնուհետև՝ «Անդրկովկասի և հյուսիսարևելյան Անատոլիայի» ուշ պղնձի-քարի դարի մշակույթների կապի մասին (***Iskili M.*** *A Collection of Kura-Araxes Pottery from Kars Museum, - "Aramazd", vol. II, 2007, p. 40-49): Մյուս թուրք կեղծարարը՝ Ս. Չիլինգիրօղլուն Հայկական լեռնաշխարհ անվանման փոխարեն օգտագործել է «Արևելյան Անատոլիա», իսկ Էյդուրու լեռնանվան մասին գրել է, որ դա «Սյուփան դաղ»-ն է (***Chilingiroghli A.*** *An Urartian Fortress in Front of Mount Eiduru: Ayanis; "Aramazd", vol. I, 2006, p.138, 140)՝ առանց հայկական Սիփան անվան հիշատակության:*

[58] *Кавказское соседство: Турция и Южный Кавказ (այսուհետև՝ КСТЮК), редактор Александр Искандарян, Е., 2008.*

[59] *Թուրք «փորձագետ» Ս. Գորգուլուն Հայոց ցեղասպանությունը ժխտելով՝ ցեղասպանություն բառը չակերտների մեջ է դրել, Արևմտյան Հայաստանը «համարել» է «արևելյան Թուրքիայի տարածք»՝ «Արևելյան Անատոլիա», հայկական զինված ուժերի կողմից Արցախի ազատագրված տարածքների կապակցությամբ էլ պնդել այն կեղծիքը, թե «Պատերազմի ժամանակ Հայաստանը օկուպացրել է Ադրբեջանի տարածքի 20%-ը» (КСТЮК, с. 142-164, հմմտ. թուրք Դ. Գոքսելի նյութը, p. 24): Ս. Իսկանդարյանն էլ գրել է. «Թուրքիան ոչ լիովին է ընկալվում Հարավային Կովկասում որպես տարածաշրջանային գործընթացների կարևոր մասնակից» (с. 5): Վ. Տեր-Գաբրիելյանը «Հարավային Կովկասի» առումով «թուրքական համատեղ պլատֆորմի գաղափարը» համարել է «թեկուզ և ինչ-որ ռեգիոնալ համակարգի կառուցման ամենից վերջին գաղափարը» (с. 50): Այնինչ սրա հիմքում է դեռևս 1913 թ. «Բայազետում» (Դարույնք) կայացած՝ թուրքական ներկայացուցիչների և «կովկասյան թաթարների» համաթրքական խորհրդակցության որոշումը՝ «արևելյան և արևմտյան թուրքերի» միավորման մասին (Зареванд, նշվ. աշխ., էջ 109), ինչպես նաև 1915 թ. վերջում Ստամբուլում թուրքական կառավարության և մի խումբ կովկասյան մահմեդականների մշակած՝ «անկախ Կովկաս» ստեղծելու ծրագիրը, որը «զարգացվեց» Ցյուրիխում 1916 թ. անգլերեն հրատարակված՝ Վրաստանը և պատերազմը» գրքում. Թուրքիան բռնազավթելու էր Արևելյան Հայաստանի արևմտյան մասը, Վրաստանը՝ հյուսիսային, իսկ ամբողջ Կովկասը դառնալու էր Թուրքիայի պրոտեկտորատը (տե՛ս* **Аветисян Г.** *К вопросу о "Кавказском доме" и пантюркистских устремлениях, http://poli.vub.ac.be/publi/etni-1/avetisyan.htm)*

փաստերի ուղղակի նենգափոխմամբ[60] և կեղծմամբ[61]:

---

[60] *Խ. Հաջի-զադեն թշնամանքով հայտարարել է. «Հայաստանը հավակնություններ է ներկայացնում ադրբեջանական Ղարաբաղի և վրացական Ջավախետիի, ինչպես նաև Թուրքիայի սահմանամերձ տարածքի նկատմամբ և այդ պատճառով գտնվում է ոչ-բարեկամական շրջապատի և, փաստորեն, տրանսպորտային շրջափակման մեջ» (ԿՏՅՈՒ, c. 37): Նա բացարձակապես կեղծել է հայկական Արցախի, Ջավախքի և Արևմտյան Հայաստանի մասին տեղեկությունները: Այնինչ՝ (1) հայտնի է Արևմտյան Հայաստանը՝ Թուրքիայի, Արցախը և Նախիջևանը՝ Ադր. ԽՍՀ-ի և Ջավախքը՝ Վրաց. ԽՍՀ-ի կողմից բռնազավթելու պատմությունը: (2) Հայկական ուժերը ազատագրել են Արցախի զգալի մասը: (3) Վրաստանի կառավարությունը Ջավախքի նկատմամբ խտրական՝ հակահայկական քաղաքականություն է վարում: (4) ՀՀ-ն և ԼՂՀ-ն շրջափակված են Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Գ. Տեր-Գաբրիելյանը նույնպես աղավաղված բերել է «Սամցխե-Ջավախետի» անվանաձևը (c. 48): Նա, անտեսելով ազգային անվտանգության բոլոր նորմերը և կեղծելով փաստերը, Հայաստանին վերագրել է «...պատերազմ վարելու մի շարք միջազգային կանոնների խախտում» (c. 43): Սակայն, հակառակ այսպիսի զրպարտության, իրականությունն այն է, որ, ի պատասխան Ադրբեջանի հակահայկական, ցեղասպան (Սումգայիթ՝ 27-29.II.1988 թ., Բաքու՝ 13-20.I.1990 թ.) գործողությունների և արցախահայության ու ԼՂՀ-ի դեմ զինված ագրեսիայի, հայկական ազատագրական ուժերի իրականացրած ինքնապաշտպանությունը «ամբողջությամբ համապատասխանում էր միջազգային իրավունքի նորմերին», ինչպես իր ելույթում նշել է Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը 2010 թ. դեկտեմբերի 2-ին ԵԱՀԿ-ի գագաթնաժողովում (տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 3. XII, 2010):*

[61] *Ծովից ծով Հայաստան հասկացությունը Գ. Տեր-Գաբրիելյանը բացարձակապես նենգափոխել է՝ համեմատելով «պանթյուրքիզմի» հետ. «Ինչպես հայերի, այնպես էլ նրանց հարևանների ստերեոտիպ մտածողությունն ավելի ծանոթ է հնաոճ հայկական էքսպանսիոնիստական գաղափարախոսություններին՝ այնպիսի տիպի, ինչպես «ծովից ծով» Հայաստան: Այդ գաղափարներն այսօր այնքանով են լուսանցքային տեղ գրաղեցնում հայկական գաղափարախոսությունների ծայրամասերում, որքանով, ասենք, պանթյուրքիզմը թյուրքական ազգերի գաղափարախոսությունների ծայրամասում» (c. 49): Այնինչ ծովից ծով Հայաստան հասկացությունը պատմականորեն ընդգրկում է հայոց մշակութակերտ արգասիքներով հարուստ Հայաստանը (Մեծ Հայք և Փոքր Հայք) և Կիլիկյան Հայաստանը՝ քաղաքականապես վերաբերելով, հատկապես, Հայոց պետության հզոր ժամանակներին, երբ նրա սահմանները հասնում էին Սև, Կասպից և Միջերկրական ծովերին:*

Գ. Տեր-Գաբրիելյանը սխալ է արտահայտվել ԼՂՀ-ի նկատմամբ ՀՀ-ի քաղաքականության ("... Армения его (Нагорный Карабах) не признает. Но и полностью официально не аннексирует..."), Հայաստանի և Սփյուռքի փոխադարձ վերաբերմունքի ("Попробуй только Армения откажись на общественном или государственном уровне от риторики национализма, от риторики "наших земель" – все 100 процентов старой Диаспоры... поднимают шум... Армения спит и видит во сне, что она – брокер миротворческих программ в регионе") վերաբերյալ (c.43-44, 52):

Ս. Մինասյանը անկոչ և անպատասխանատու կերպով հայ հասարակությանը վերագրում է զիջումների տրամադրություններ. «Ղարաբաղում ռազմական հաղթանակի արդյունքներից մեկն այն է, որ հայ հասարակությունը, բնականից, առավել չափով է պատրաստ զիջումների և կոմպրոմիսների, քան ադրբեջանականը» (ԿՏՅՈՒ, c. 73):

Ա. Իսկանդարյանը այդ նույն ոգով գրում է. «Պատմական փաստերի[62] նախկին «սովետիզացման» փոխարեն այժմ միտում է առաջացել հայ ժողովրդի պատմական անցյալի «հնացման» և աշխարհագրական ընդգրկման ընդլայնման: Այսպես, օրինակ՝ 1990-ա- կան թթ. շատ հայ պատմաբանների մոտ ամրագրվեց մի հայեցակարգ, թե Ուրարտուն կամ Վանի թագավորությունը հայկական էթնոլեզվական գերակշռությամբ պետություն էր: «Ուրարտու»-ի փոխարեն աստիճանաբար շրջանառության մեջ դրվեց «Արարատյան թագավորություն» տերմինը»[63]: Ա. Իսկանդարյանին հայտնի չէ, որ հայկական Արարատ անունը XIX դարում վերծանված ասորեստանյան սեպագիր արձանագրություններում ընթերցվել է «Ուրարտու», ինչը, ըստ եվրոպական որոշ ա- րևելագետների, արտահայտում է Արմենիային նույնացվող բիբլիական Արարատի անունը, որը

---

[62] *Ա. Իսկանդարյանը պատմության բացարձակ անգիտությամբ գրել է. «Գոյություն ունեին երեք միութենական հանրապետություններ (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան), որոնց մեջ տարբեր մակարդակների ինքնավարություններ էին մտնում... Հնարավոր է, որ եղել են նաև ոչ-էթնիկ ինքնավարություններ, ինչպես վրացիների ինքնավարությունը Վրաստանում, ադրբեջանցիներինը՝ Ադրբեջանում (Աջարիան և Նախիջևանը)» (ԿՀՏՅԿ, c. 9): Սակայն Խորհրդային Հայաստանում ոչ մի ինքնավար միավոր չի եղել: Խորհրդային Ռուսաստանը 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ապօրինի պայմանագրով Թուրքիային էր հանձնել Կարսի Մարզը, Սուրմալուի (Սուրբ Մարի) գավառը, նաև «համաձայնություն» էր կայացել՝ խորհրդային Ադրբեջանին բռնակցել Նախիջևանի գավառը՝ մի երրորդ պետության չզիջելու պայմանով: Այդ բռնի և հանցավոր գործարքն ամրագրվել էր հոկտ. 13-ի Կարսի նս ապօրինի պայմանագրով (իսկ հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն ապօրինի որոշել էր Լեռնային Ղա- րաբաղը բռնակցել խորհրդ. Ադրբեջանին): 1923 թ. ստեղծված Նախ. Ինք. Մարզը 1924 թ. փետր. 9-ին դարձել էր Նախ. Ինք. Խորհրդ. Սոց. Հանր.՝ Ադրբ. ԽՍՀ-ի կազմում, դրանով իսկ՝ «Ադրբեջանի ղեկավարության ծրագրած հայահալած քաղաքականության հետևանքով հայերը ստիպված զանգվածաբար հեռացել են իրենց բնօրրանից... ԽՍՀՄ կազմից Ադրբ. Հանր. դուրս գալուց (1991-ի օգոստ. 30) հետո վերանվանվել է Նախ. Ինք. Հանր.» (Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 3, Ե., 1999, էջ 841-842): Ա. Իսկանդարյանը, անտեսելով «Ադրբեջանի» արհեստածին լինելը, հայկական Նախիջևան գավառում խորհրդային ժամանակաշրջանում Բաքվի իշխանությունների վարած հակահայկական քաղաքականությունը և Նախիջևանը կոչելով «Նախիչևան» օտար անվանաձևով, այն «բնութագրում» է որպես «ադրբեջանցիների ինքնավարություն Ադրբեջանում»:*

Հայկական մշակույթի՝ ադրբեջանական իշխանությունների կողմից ցեղասպանության նորագույն վկայություններից է Ջուղայի տասնյակ հազարավոր խաչքարերի (տե՛ս **Այվազյան Արզամ,** *Ջուղա, Ե., 1984) վերջին խմբի և հայկական գերեզմանատան ոչնչացումն ու զինվորական հրաձգարանի վերածելու հանցագործությունը XXդ. սկզբին (Julfa. The Annihilation of the Armenian Cemetery by Nakhijevan's Azerbaijani Authorities, Beirut, 2006; "Европейский суд по правам человека рассматривает вопрос уничтожения армянского кладбища в старой Джуге" http://news.barev.net/society/1543-Evropeiskii-sud-po-pravam-cheloveka-rassmatrivaet-vopros-unichtozhenija-armjanskogo-kladbiwa-v-staroi-Dzhuge.html):*

[63] **Искандарян А.** *Армения: удревление модерна (Национальные истории на постсоветском пространстве, II, М., 2009, с. 229).*

նաև, համապատասխանաբար, Հայոց արքաների գլխավորած Հայոց թագավորության անվանումն է[64]:

Ա. Իսկանդարյանը գրում է, որ «հայկական պատմական շարադրանքի համար բացարձակ կարևոր է դառնում, ընդհանուր առմամբ, հայկական պատմության համար շատ ոչ-բնորոշ Տիգրան Մեծի կառավարման ժամանակաշրջանը Ք.Ծ.ա. I դարում»[65]: Նա բացարձակապես տեղյակ չէ հնագիտության և պատմագիտության ձեռքբերումներին[66], այլ պարագայում նրան հայտնի կլիներ, որ Տիգրան Մեծի դարաշրջանում իր գագաթնակետին հասած հայկական պետականության հիմքում մ.թ.ա. III-II հազարամյակներից եկող զարգացումներն էին: Ավելին, Հայաստանում դեռևս Արարատյան՝ Վանի թագավորության վաղ շրջանի (մ.թ.ա. IX դ.) սեպագիր արձանագրություններում վկայված արքայից արքա տիտղոսը Տիգրան II Մեծը Հայոց գահին էր վերադարձրել:

Ազգային արժեքների և պատմության խեղաթյուրմամբ, հասարակությանը գաղափարապես անկայուն դարձնելու ուղղությամբ վերջերս «աչքի ընկավ» նաև «Գլոբալացման և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը», որի տնօրեն Ստեփան Գրիգորյանի նախաձեռնությամբ լույս տեսած՝ «Հարավային Կովկասի երկրների պատմության և մշակույթի ակնարկներ»[67] «գրքի» առաջին բաժնի «հեղինակ» Ա. Ասլանովը պանթուրքիզմի զառանցանքով գրել է. «Ադրբեջանը՝ հին պատմության և մշակույթի երկիր է, այս երկրամասը երկրագնդի վրա մարդու առաջացման

---

[64] **Rawlinson H. C.** *A commentary on the cuneiform inscriptions of Babylonia and Assyria, London, 1850, p. 40, 70,* **Oppert J.** *Expédition scientifique en Mésopotamie, Paris, 1863, t. I, p. 18, 354, H. Layard, Discoveries in the ruins of Ninveh and Babylon, London, 1853, p. 403 և այլն, տե՛ս նաև* **Դումիկյան Ա.,** *Հին Հայաստանի մասին հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների վկայությունները XIX դ. ֆրանսիացի արևելագետների լուսաբանմամբ (Հայոց պատմության հարցեր, 10, Ե., 2009, էջ 3-13):*

[65] **Искандарян А.** *Армения: удревление модерна, с. 234.*

[66] *ՀՀ ԳԱԱ գիտական ամսագրերի հրապարակումներին անտեղյակ Ա. Իսկանդարյանը գրում է. »Ի տարբերություն Ռուսաստանի՝ Հայաստանում չկա գիտական ամսագիր, որը հասարակական գիտություններում եղանակ ստեղծեր կամ գիտնականների միջավայրում հատուկ հեղինակություն վայելեր: Ամսագրերը (Պատմա-բանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, «Բանբեր» Երևանի պետական համալսարանի) հիմնականում այն տեղի դերն են կատարում, որտեղ հրատարակվում են թեկնածուական կամ դոկտորական դիսերտացիաների պաշտպանության համար անհրաժեշտ հոդվածներ...» (***Искандарян А.*** *Армения: удревление модерна, с. 226): Այս զրպարտիչ պոռթկումի պատճառն է Национальные истории в советском и постсоветских государствах (М., 1999) ժողովածուում տպագրված իր համահեղինակած «նյութի» կապակցությամբ հրապարակված մի քննադատական հոդված (Լրաբեր, 2007, N 3, էջ 201-223):*

[67] *Очерки истории стран Южного Кавказа, мультиперспективный взгляд на историю (այսուհետև՝ ОИСЮК), под ред. Степана Григоряна, Е., 2009. Առաջաբանում նշված է, որ «հեղինակների առջև դրված խնդիրներից էր» այն, որ «ակնարկն ընդհանուր խմբագիր չի ունենա» (էջ 5), սակայն տիտղոսաթերթի մյուս էջին գրված է խմբագրի անունը:*

և տարածման առաջին օջախներից մեկն է... Ադրբեջանի տարածքը ձգվում է ...Կասպից ծովից մինչև Փոքր Ասիա՝ կազմելով 410 հազ. ք. կմ.: Արազ գետից հյուսիս տարածքը՝ մենք պայմանականորեն անվանում ենք Հյուսիսային Ադրբեջան, իսկ այդ գետից հարավ՝ Հարավային Ադրբեջան... Պատմական Ադրբեջանի տարածքում միակ պետական կազմավորումն Ադրբեջանական Հանրապետությունն է[68]... Գյոքչա լճի շուրջ խորը անցյալում բնակվել են մեր նախնիները. այստեղ XVIII դ. առաջացել է ոչ մեծ Իրևանյան խանությունը, որը XIX դ. նվաճվեց Ռուսական կայսրության կողմից: Այդ ժամանակվանից ադրբեջանական հողն արդեն ավելի քան 200 տարի պոկված է իր պատմական Հայրենիքից»[69]: «Կասպից ծովից մինչև Փոքր Ասիա» ընկած տարածքը (որն Ասլանովը կեղծարարական խելահեղությամբ անվանում է «Ադրբեջան»[70]) իրականում հա-

---

[68] *Նույն ագրեսիվ կեղծարարությամբ 2007 թ. Բաքվում հրապարակված «Արևմտյան Ադրբեջանի հուշարձանները» հակագիտական և հակահայկական քարոզչական «գրքում» զետեղված կեղծիք-քարտեզը վերնագրված է «Արևմտյան Ադրբեջանի՝ ներկայումս «Հայաստանի Հանրապետություն», քարտեզ»՝ թուրքերի և օղուզների հայրենիքը» (***Alakbarli A.*** *Les Monuments d'Azerbaijan d'Ouest, Baku, 2007): Ռազմամոլ՝ պետական մակարդակի բարձրացված այս թշնամական զառանցանքը հովանավորել է Ադրբեջանի Հանրապետության Մշակույթի և տուրիզմի մինիստրությունը: Ռ. Գալչյանը այս «գիրքը» անվանել է «ադրբեջանական ֆանտազիաների նորագույն և ծայրահեղ դեպքերից մեկը» (***Galichian R.*** *The Invention of History, London-Yerevan, 2009, p. 5-6):*

[69] *ОИСЮК, с. 15: Որպես պանթուրքիզմի չարորակ ուռուցք՝ «Ադրբեջան» կեղծ-պետական կազմավորումը խորհրդային տարիների գաղափարական «անձնագրման» որոշակի փուլեր էր անցել. հորինվում էր Խորհրդային Ադրբեջանի պատմությունը Հայոց Արևելից կողմերի (Արցախի և Ուտիքի՝ Կուրի աջափնյակում), բուն Աղուանքի (Կուրի ձախափնյակում), ինչպես նաև Իրանական Ատրպատականի (Ուրմիայից հարավ-արևելք) և Մարաստանի ու այլոց պատմությունների կողոպուտի և նենգափոխման միջոցով [տե՛ս* ***Մնացականյան Ա.,*** *Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջ, Ե., 1966,* ***Мушегян А.*** *Псевдоалбанская литература и ее апологеты (Լրաբեր, 1989, N 8, էջ 16-33) և այլն]:*

[70] *Անդրալթայան տափաստաններից ներխուժած վայրենի թյուրքական ցեղերից (Ռուսական կայսրության փաստաթղթերում XX դ. սկզբներին այդ եկվոր ցեղերը պայմանականորն կոչվում էին «կովկասյան թյուրքեր», «թաթարներ», կամ «անդրկովկասյան թաթարներ»՝ Կազանի և այլ տեղերի թաթարներից տարբերելու համար)՝ թուրքական ցեղասպան քաղաքականության բովերում խմորված և 1918 թ. կեսերին Իրանական Ադրբեջանից (Ատրպատական) կողոպտած անվանումով «ստեղծվել» էր պանթուրքիզմին ծառայող մերձկասպյան քաղաքական միավոր: ՀՀ վարչապետ և արտգործնախարար Ա. Խատիսյանը 1919 թ. երկրորդ կեսին այդ մասին Փարիզի վեհաժողովին գրել է. «Ադրբեջանի կառավարության կողմից Ղարաբաղի նվաճման ծրագիրը նպատակ ունի պանթուրանական ձգտումների իրականացումը, որով աշխատում է միացնել Ադրբեջանը Ղարաբաղի ու Նախիջևանի վրայով Թուրքիային ու Պարսկաստանին, այսպիսով ստեղծել մուսուլմանական կոմպակտ զանգված, կտրել Արևելյան Հայաստանն Արևմտյան Հայաստանից՝ ոչնչացնելով Միացյալ Հայաստանի ստեղծումը ... Հայաստանի կառավարությունը... հայտնում է մի անգամ ևս իր անդրդվելի վստահությունը..., որ Հաշտարար կոնֆերանսն իր մասնավոր և բարեհաճ ուշադրության կառնի Հայաստանի Հանրապետության համար այնքան կենսական եղող Ղարաբաղի հարցը» (Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Ե., 2001, էջ 730-731): Թուրքական և մուսավաթական՝ թյուրք-թաթար հրոսակները իրագործեցին հայերի կոտորածները՝ Բաքվում (15-17.IX.1918թ.) և Շուշիում (Արցախ) (23.III.1920 թ.):*

մապատասխանում է մի կողմից՝ Հայաստանի [Մեծ Հայքի Փայտակարան աշխարհից (Կասպից ծովին էր հասնում)՝ հարավ-արևելքում, մինչև Փոքր Հայքի արևմտյան սահմանը], իսկ մյուս կողմից, Կուր գետի ձախափնյակի՝ մինչև Կասպից ծով հասնող երկրամասերի (բուն Աղուանքը հնուց գտնվել է հայկական պետականության ու Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր և քաղաքակրթական ազդեցության ներքո)[71] և Իրանի հյուսիս-արևմուտքում՝ Ուրմիայից հարավ-արևելք գտնվող Ատրոպատենե-Ատրպատականի տարածքներին:

Սևանա լճի (Գեղամա ծով) և Երասխ գետի[72] (Արաքս) անունները կեղծելով՝ «Գյոքչա» ու «Արազ» «վերանվանելու» և լճի շրջակայքը գոյություն չունեցած «իրենց նախնիների» բնակավայրը համարելու, իսկ Էրեբունի-Երևանը «Իրևան» վերանվանելու և «Իրևանի խանությունը» «ադրբեջանցիների պետություն» հորջորջելու դիվահար «ոգով» Ա. Ասլանովը շարունակել է իր հակագիտական և հակահայկական զառանցանքը իր «տեքստի» հաջորդ էջերում: Իսկ վրացի «պատմաբան» Պ. Ռամիշվիլին «Վրաստանի սոց.-քաղ. պատմության» իր շարադրանքում նենգափոխելով պատմական փաստերը՝ Հայոց Գուգարաց աշխարհի Թռեղք գավառի անվանումը բերում է «Թրիալե-թի» ձևով և այդտեղ պեղված դամբարանաբլուրների նյութերը դասում Վրաստանի միջին բրոնզի դարի հնագիտական հուշարձանների շարքում[73]: Նմանապես նենգա-փոխելով Մեծ Հայքի Գուգարաց աշխարհի Ջավախքի պատմությունը, բնակչությանն անվանելով «ջավախի»՝ թվարկում է վրաց-կովկասյան ցեղերի շարքում[74]: Սակայն այդպիսի անունով ցեղ չի եղել, իսկ Ջավախքը բուն հայկական տարածք է[75]: Պ. Ռամիշվիլին, խոսք անգամ չասելով Հայաստանի մասին, արարատյան սեպագիր աղ-բյուրներից հայտնի Դիաու(ե)խի[76] անվանումը ներկայացնելով «Դիաոխի» ձևով, այդ երկրամասը հիշատակում է «Կոլխիդայի և Էգրիսիի» թագավորությունների շարքում[77], դրանով իսկ, պատրաստվելով ասելու, թե Վրաստանի հարավ-արևմուտքում գտնվող «Տաո-Կլարջեթի» նահանգից «սկզբնավորվում է Բագրատիոնի վրացական հարստությու-

---

[71] **Դանիելյան Է.**, *Մովսես Խորենացու ավանդազրույցը, էջ 183, 195: Պատմության ընթացքում Կուրի ձախափնյակում և մերձկասպյան երկրամասում հայկական քաղաքական, հոգևոր-մշակութային և ժողովրդագրական ազդեցությունների մասին տե՛ս* **Ստեփանյան Գ. Ս.**, *Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, Ե., 2010, էջ 6-54:*

[72] **Մովսէս Խորենացի,** *էջ 39, 170, 176:*

[73] *ОИСЮК, с. 74.*

[74] *Նույն տեղում, էջ 79:*

[75] **Մովսէս Խորենացի,** *էջ 113,* **Երեմյան Ս. Տ.,** *Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Ե., 1963, էջ 109-110:* **Մելքոնյան Ա. Ա.,** *Ջավախքը XIX դարում և XX դ. առաջին քառորդին, Ե., 2003:*

[76] **Арутюнян Н. В.** *Корпус урартских клинообразных надписей, Е., 2001, с. 503.*

[77] *ОИСЮК, с. 75.*

նը»[78]: Սակայն, նախ՝ Տայքը Մեծ Հայքի տասնհինգ աշխարհներից մեկն է, իսկ Կղարջքը՝ Գուգարաց աշխարհի արևմուտքում գտնվող գավառը[79]: Երկրորդ՝ հայ Բագրատունիների հյուսիսային ճյուղը սերում էր Այրարատ աշխարհի Կոգովիտ գավառի տեր (Արաբական խալիֆայության զորքերի դեմ Արճեշի ճակատամարտին (775 թ.) մասնակցած) հայ իշխան Վասակ Բագրատունու[80] թոռ Աշոտից[81]: Տեղեկատվական պատերազմում Թուրքիան և Ադրբեջանը հսկայական միջոցներ են ծախսում հակահայկական քարոզչության, հատկապես Հայոց պատմության դեմ ուղղված կեղծարարության և հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացման, կերպափոխման, «սեփականացման», միջազգային ասպարեզում սադրիչ ապատեղեկատվության ուղղությամբ:

Հայ պատմագիտության հիմնախնդիրներից է հայկական ամբողջական քաղաքակրթական արժեհամակարգի գիտական և գաղափարական պաշտպանությունը՝ հայագիտական հայեցակարգի հիման վրա[82]: Հայկական լեռնաշխարհի բնապատմական միջավայրում Հայոց պետականության զարգացումների ընթացքը՝ պայմանավորված մ.թ.ա. VIII-IV հազարամյակներից էթնոհոգևոր, մշակութային ու լեզվական[83], հասարակական ու քաղաքական գործընթացներով, վր-

---

[78] ОИСЮК, с. 74-80: Մինչև XX դ. երկրորդ տասնամյակը մերձկասպյան տարածքներում գոյություն չունեցած «Ադրբեջանի» և էթնոմշակութային պատմությամբ կուրից հյուսիս գտնվող Վրաստանի մասին՝ Ասլանովի և Ռամիշվիլու կեղծարարություններով հագեցած «հարավկովկասյան ակնարկները», որոշակի զավթողական նպատակներով, բացարձակապես աղավաղված են ներկայացնում տարածաշրջանի պատմական պատկերը: Ուստի, կառուցվածքային և բովանդակային առումով անհարիր է սխալ կիրառված «Հարավային Կովկաս» վերնադրային տերմինով կազապարված «ակնարկներում» զետեղել աշխարհագրականորեն ամբողջ Հայկական լեռնաշխարհը ներկայացնող «Հայաստանի սոց.-քաղ. պատմություն»-ը (հեղ.՝ Ա. Խաչիկյան), քանզի Հայաստանի միայն արևելյան մասն է՝ տարբեր կարգավիճակներով (ՀՀ, ԼՂՀ և իրենց ազատագրմանը սպասող՝ Արցախի մնացած մասը, Նախիջևանը, Ջավախքը, Ուտիքը) Այսրկովկասում, իսկ մեծագույն մասը՝ Արևմտյան Հայաստանը, ցեղասպանության միջոցով բռնազավթված է Թուրքիայի կողմից:

[79] **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 110:

[80] Պատմութիւն **Ղեւոնդեայ**, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 146-147:

[81] «Եւ տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան. և կայսրն առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան» (Հաւաքումն Պատմութեան **Վարդանայ Վարդապետի**, Վենետիկ, 1862, էջ 77):

[82] **Դանիելյան Է.**, **Թաիրյան Վ.**, Հայոց պատմական ժառանգության պաշտպանության գործը և անվտանգ տեղեկատվական արգի միջոցները (Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Ե., 2004, էջ 6-12):

[83] Ըստ Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի, հնդեվրոպական նախահայրենիքը գտնվել է «արևելյան Անատոլիայի, Հարավային Կովկասի և Հյուսիսային Միջագետքի սահմաններում», որտեղ էլ V-IV հազ. տեղի է ունեցել հնդեվրոպական ընդհանրության տրոհումը, որի ընթացքում՝ «մ.թ.ա. III հազ. ոչ ուշ անջատվել է հունա-հայկական-արիական բարբառային ընդհանրությունը» (**Гамкрелидзе Т.**, **Иванов Вяч.** Индоевропейский язык и индоевропейцы, II, Тбилиси, 1984, с. 865, 895.): Այդ սահմաններում նշված տարածքի մեծ մասում գտնվում է Հայկական

կայված է հնագիտական նյութերի հաջորդականությամբ ու բազմադարյան պատմամշակութային հուշարձաններով և գրավոր սկզբնաղբյուրներով: Գոյաբանական աշխարհընկալմամբ, Հայաստանն իր բնապատմական միջավայրում արգասավորված քաղաքակրթական արժեհամակարգով հարատևող ամբողջություն է: Գիտական և ազգապետական անհրաժեշտություն են հին և միջին դարերի Հայոց քաղաքակրթական արժեքների հետազոտությունը[84] և պաշտպանությունը:

լեռնաշխարհը, որը նրանք այստեղ միտումնավոր չեն հիշատակել, քանի որ գրա զգալի մասում, կեղծելով փաստերը և առանց որևէ գիտական հիմքի, տեղադրել են «նախաքարթվելական» ցեղերին (նույն տեղում, քարտեզ 956 և 957 էջերի միջև): Ըստ նորագույն մեթոդներով կատարված լեզվաժամանակագրական հետազոտությունների, Անատոլիայից (Փոքր Ասիա) հնդեվրոպական լեզուների վաղագույն տարածումը եղել է մ.թ.ա. VIII հազ. կես-VII հազ.: Նախ անջատվել է խեթական լեզվաճյուղը (մ.թ.ա. VII հազ. առաջին կես), իսկ մ.թ.ա. VI հազ. երկրորդ կեսին-մ.թ.ա. V հազ. սկզբին թոխարական և հունական ու հայկական լեզվաճյուղերը (**Gray R. D., Atkinson Q. D.** *Language-tree Divergence Times Support the Anatolian Theory of Indo-European Origin, Nature, vol. 426, 2003, pp. 435-438*): Այս տեսությունում ևս աշխարհագրական կարգի անճշտություն կա, քանի որ հայկական լեզվաճյուղի կապակցությամբ հեղինակները չեն նշել Հայկական լեռնաշխարհը:

Բ. Ս. Դյուրինգը քննագատել է Թուրքիայում պանթյուրքիզմը, ինչպես նաև «քաղաքակիրթ ռասա» երևալու նպատակով շումերներին, խեթերին և հույներին թյուրքական ծագում վերագրելը և թուրքական «ինքնությունը» «հաստատելիս» տարբեր բնագավառների համաձուլումը՝ այսինքն կեղծարարությունը: Սակայն, նա Փոքր Ասիայից արևելք գտնվող տարածքում կատարված հնագիտական պեղումների մասին գրելիս Հայկական լեռնաշխարհ տերմինի փոխարեն օգտագործել է «արևելյան Թուրքիայի լեռներ» և «հարավարևելյան Անատոլիա» արտահայտությունները (*Bleda S. During, The Prehistory of Asia Minor, Cambridge, 2010, p. 4-5, 7, 23, 27, 45, 47-48, http://books.google.fr/books?id=3kzhNS_omfEC&pg=PA48&dq=%22Golden+triangle%22+Asia+Minor&hl=fr&ei=1tizTLb0AsKRswbv3YCzCQ&sa=X&oi=book_result&ct=result&resnum=2&ved=0CDMQ6AEwAQ#v=onepage&q&f=false*), այնինչ խոսքը Արևմտյան Հայաստանի երկրամասերի մասին է:

Ակնհայտ է, որ «Անատոլիա» տերմինի շուրջ ստեղծված խառնաշփոթը խիստ բացասաբար է ազդում հնագիտության, լեզվաբանության և այլ բնագավառներում հետազոտություններ կատարելիս: Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասի փոխարեն նենգափոխված «արևելյան Անատոլիա» տերմինի կիրառումով Արևմտյան Հայաստանին վերաբերող հնագիտական տվյալները բացարձակապես կեղծված են մեկնաբանվում: Եթե օտար մասնագետներն արգեն իսկ խոսում են հայերենի ակունքների մասին նեոլիթ-էնեոլիթյան դարաշրջաններում, ուրեմն, պետք է պատմաաշխարհագրական տերմինների ճշգրիտ օգտագործմամբ և հնագիտական նյութերի էթնոհոգևոր բնութագրմամբ ներկայացնեն հայերենի և հայ ազգի պատմամշակութային բնիկ միջավայրը՝ Հայկական լեռնաշխարհը:

[84] Այդ տեսակետից անհրաժեշտ է, պետական հովանավորությամբ, միջազգային գիտաժողով հրավիրել՝ «Հայոց քաղաքակրթական ժառանգությունը և «Մետաքսի ճանապարհը» թեմայով, կարևորելով համաշխարհային քաղաքակրթական զարգացումներում Հայաստանի «Մետաքսի ճանապարհի» ոլորտում ունեցած մշակութային և առևտրատնտեսական ներդրումը:

НЕОБХОДИМОСТЬ ЗАЩИТЫ АРМЯНСКОЙ ИСТОРИЧЕСКОЙ И ЦИВИЛИЗАЦИОННОЙ ЦЕННОСТНОЙ СИСТЕМЫ

ДАНИЕЛЯН Э. Л.

Резюме

Научная и идеологическая защита армянской исторической и цивилизационной системы ценностей на основе арменоведческой концепции является одной из задач армянской историографии.

Развитие армянской государственности в условиях естественноисторической среды Армянского нагорья, обусловленное с VIII-IV тысячелетий до н. э. и в последующие века процессами этнодуховного, культурного, языкового, общественного и политического значения, отражено в континууме археологических материалов и историко-культурных памятников, а с III тыс.-первой половины I тыс. до н. э. – клинописных, и далее – античных и средневековых письменных источников. В онтологическом аспекте Армения со своей системой цивилизационных ценностей являет собой единое целое.

Турция, осуществившая геноцид армян в Западной Армении, Армянской Киликии, Армянской Месопотамии и во всей Османской империи, и обвиненная совместной Декларацией Франции, Великобритании и России (24 мая 1915 г.) – первого международного правового документа, осуждающего геноцидные преступления Турции – в совершении преступлений против человечества и цивилизации, продолжает оккупацию преступным образом захваченных ею армянских территорий. Порожденный пантюркизмом в прикаспийской области Восточного Закавказья “Азербайджан” (со второй половины 1918 г. с украденным у Иранского Азербайджана названием) унаследовал турецкие экспансионистские методы геноцида (резня и погромы армян со стороны как турецких и мусаватистских тюрко-татарских банд в Баку(15-17.IX.1918 г.) и Шуши (центр армянской области Арцах) (23.III.1920 г.), так и их потомков – азербайджанских погромщиков в конце 80 – начале 90-ых гг. XX в. в Сумгаите, Баку и других районах).

Турция и покровительствуемый ею Азербайджан (потерпевший поражение в развязанной им войне против Нагорно-Карабахской Республики) затрачивают огромные средства и усилия на антиармянскую пропаганду (посредством информационных провокаций в международном плане), в особенности, на фальсификацию истории Армении и геноцид армянской культуры –уничтожение армянского историко-культурного наследия. На протяжении последних двух десятилетий Турция и Азербайджан осуществляют акт государственного терроризма – блокаду Республики Армения и НКР (Арцах).

Таким образом, исследование и защита цивилизационных ценностей древней и средневековой Армении, привнесшей неоспоримый вклад в мировую культуру, является научной и национально-государственной необходимостью.